911 Արտակարգ թերթ

N 34 (682)
15-21.09 2017

ISSN 1829-149X

ԱԻՆ
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF EMERGENSY SITUATIONS OF RA
МИНИСТЕРСТВО ПО ЧРЕЗВЫЧАЙНЫМ СИТУАЦИЯМ РА

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

«Խոսրովում»

Կանաչ ծիլեր

«Խոսրովի» այրված հատվածներն սկսել են վերականգնվել, և որոշ տեղերում կանաչ ծիլեր են նկատվում: Այդ մասին անտառում դիտարկումներից հետո արձանագրել է ԱՄՆ անտառային ծառայության փորձագիտական խումբը: Անտառային գենետիկայի մասնագետ Էնդրյու Բաուերն ասել է, թե քամու պատճառով հրդեհը շատ արագ է տարածվել, վնասը եղել է մակերեսային, ծառարմատները պահպանվել են: Նոր, կանաչ ծիլեր կան: Վերականգնման համար միջամտության անհրաժեշտություն կարող է չլինել:

ՄԱԿ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի Երևանի գրասենյակը և ՀՀ բնապահպանության նախարարությունը համաձայնագիր են ստորագրել, որով Հայաստանը կստանա 1 մլն դոլար՝ «Հայաստանում կլիմայի փոփոխության ազդեցության մեղմումն անտառային և դաշտային հրդեհների կառավարման ներուժի զարգացման միջոցով» ծրագրի իրականացման համար: Այս ծրագրով անտառներում կտեղադրվեն վաղ նախազգուշացման և մշտադիտարկման համակարգեր, անտառտնտեսությունները կհամալրվեն ժամանակակից սարքավորումներով և տեխնոլոգիաներով:

Անտառների և դաշտերի միջև բուֆերային խրամատներ փորելու համար ձեռք կբերվեն տեխնիկական միջոցներ, անտառապահների համար կգնվեն ուսապարկ-պոմպեր, հրդեհամարիչ սարքեր, այլ անհրաժեշտ միջոցներ:

Կխրախուսվեն անտառային և դաշտային հրդեհների մեղմանն ու կանխմանն ուղղված նորարարական մոտեցումները: ■

Խմբագրական

ՀՐԴԵՀԻՑ ՀՐԴԵՀ

Ամառն անցավ չափազանց շոգ պայմաններում: Օգոստոսին օդի ջերմաստիճանը մի քանի անգամ ռեկորդային եղավ, նաև՝ հրդեհաշատ: Սկզբում «Խոսրովն» էր, հետո՝ «Բյուրականը»՝ խոտածածկ տարածքներն էլ չհաշված: Ու տպավորություն էր, որ փրկարարները մի ճակատամարտը չավարտած, ուժ ու միջոցներ դեռ չհամալրած՝ նորից մարտի են նետվում: Ու կարծես հրդեհի դեմ այդ թեժ կռիվներում միայնակ են, պաշտպանված չեն. չի գիտակցվում աղետը և անվստահություն է սերմանվում հրշեջ-փրկարարների աշխատանքի նկատմամբ:

Հարցնում են՝ ինչո՞ւ են շատացել հրդեհները: Բազմիցս ենք նշել՝ անտառային հրդեհների առաջացման պատճառը մարդկային անզգուշությունն է, փնթիությունը: Անտառների, չոր խոտածածկ տարածքների հրդեհային անվտանգության երաշխիքը օրենսդրական շատ ու շատ բացերի լրացումն է: Ժամանակն է խստացնել պատժամիջոցները: Այդպես է աշխարհի զարգացած երկրներում: Ավելի սերտացնել է պետք ԱԻՆ-ՏԻՄ գործակցությունը: «Բյուրականի» օրերին քամու ուղեկցությամբ խոշոր հրդեհներ էին Ջաջուռում և Դիլիջանում: Մարվեց արագ ու միասնական գործողությունների շնորհիվ: Ավաղ, Շիրակում փրկարարներց մեկը այրվածքներով տեղափոխվեց հիվանդանոց:

Հարցնում են՝ ինչո՞ւ մարված անտառը օր հետո նորից վառվեց, ինչո՞ւ ԱԻՆ-ը չհետևեց, որ չբռնկվի: Ու նույն լրատվամիջոցը կարող չէ գրելու թաքնված ծխացող օջախների մասին, չգիտե, որ մարված անտառում, եթե 1000 աչք էլ հետևի, միևնույն է, արևի ջերմությունից հրդեհի վտանգը կա:

Հարցնում են, ինչո՞ւ են ծառի ճյուղերով հանգցնում այրվող խոտածածկը: Հրշեջների փորձով և վերջապես EuroFire-ի չափանիշներով բարդ ռելիեֆ ունեցող խոտածածկերում հրդեհաշիջումը ջրով՝ խնդիր է: Հարմար են ծառի ճյուղերը, իսկ առավել հարմար՝ սովորական ցախավելն ու հատակի ավելը: Դրանք թեթև են ու չեն հոգնեցնում՝ ի տարբերություն չիրկիզվող ծածկոցների, շորերի, ծառի ճյուղերի: Մեկ հարվածով շատ տարածք են հանգցնում: Հնարավորություն են տալիս մի քանի փրկարարով մարել 1 կմ-ից ավելի կրակե գիծ:

Հարցնում են. Բյուրականում հրշեջ մեքենաների մեծ մասն ինչո՞ւ էին ջրով բեռնված՝ կանգնած ճամփեզրին: Ճապոնական այս հսկաները կրում են 10 տ ջուր: Այդ տարողությամբ մեքենաները չէին կարող աշխատել բարդ ռելիեֆում: Հրդեհաշիջման մարտավարությամբ՝ նրանց շնորհիվ կրակին մոտիկ տարածքներում ջրի պակաս չի եղել: Այդ մեքենաներից շատ ամենագնացներ են գործել անտառում: Մեծ ճնշման տակ մեքենայում ջուրը վերջանում է հաշված րոպեներում: Ու լիցքավորումն արագացրել են այս մեքենաները:

Ասում են, թե կարելի էր հրդեհը երկու ժամում հանգցնել: Եթե անտառապահների հսկողությունն աչալուրջ լիներ, գուցե հնարավոր լիներ, բայց երբ իրավիճակը բարդացել է՝ անհնար է եղել: Եվ բոլոր փրկարարներն են գործել ուժերի առավելագույն չափով: Բոլորը՝ հատուկ ջոկատայիններ՝ հրդեհից հրդեհ անցած:

Պարոնայք, չիմացածը մի՛ ներկայացրեք իբրև ճշմարտություն: Մեզ մոտ բավարար պաշտպանված չեն անտառները, այդ մասին է պետք մտածել, գիտակցել աղետի վտանգը, վստահել հրշեջ-փրկարարներին: ■

Գագիկ ԵՂՅԱՆ

Կարևոր

«ՆԱԻՐԻՏԻ» ՀԱՐՑՈՎ

էջ 2

ՀԱՏՈՒԿ ՋՈԿԱՏԱՅԻՆՆԵՐԸ

էջ 3

ՔԱՋԱՐԱՆԻ ՀՓՁ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ

էջ 5

ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐ

էջ 6

911 Արտակարգ թերթ
N 34 (682)
15-21 սեպտեմբերի, 2017

Համաժողով

Հոկտեմբերի 11-13-ը Երևանում կանցկացվի «Դիմակայունության բարձրացում կայուն զարգացման նպատակով» խորագրով միջազգային համաժողովը, որին կմասնակցի եվրոպական և ասիական մոտ 20 երկիր: Սա նշանակում է, որ աղետների ռիսկի նվազեցման ուղղությունը զարգացնելու հարցում Հայաստանը դառնում է նախաձեռնող երկիր: Առավել մանրամասն՝ մեր թերթի հաջորդ համարում:

ԻՆ ԱՐԵՆ 2

«ՆԱԻՐԻՏԻ» ՀԱՐՑՈՎ

Միջազգային փորձագետները՝ Երևանում

Սեպտեմբերի սկզբին տեղեկացրել ենք, որ օգոստոսի 28-ին «Նաիրիտ» գործարանում բռնկված հրդեհի հաջորդ օրը ԱԻ նախարար Դավիթ Տոնոյանը աշխատանքային խորհրդակցություն էր անցկացրել միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ:

Քննարկվել է գործարանից եկող քիմիական և էկոլոգիական ռիսկերի, բնակչության և շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցության գնահատման հարցերը միջազգային փորձագետների օգնությամբ լուծելու խնդիրը: Միջազգային կառույցների ներկայացուցիչներն ասել էին, որ պատրաստ են հնարավոր բոլոր միջոցներով աջակցել ԱԻ նախարարությանը:

ԱԻՆ արտաքին կապերի վարչության պետ Մարիամ Գևորգյանից տեղեկացանք, որ Միավորված ազգերի կազմակերպության մարդասիրական հարցերի համակարգման գրասենյակի (UN OCHA) և Արտակարգ արձագանքման համակարգող եվրոպական կենտրոնի (ERCC՝ Եվրոպական հանձնաժողովի քաղաքացիական պաշտպանության և մարդասիրական օգնության ծրագրերի ECHO, ցանցի օղակ) աջակցությամբ սեպտեմբերի 11-ին Հայաստան է ժամանել երեք փորձագետ.

Վիլիամ Կռուզ Մոռեյ՝ թունավոր նյութերի և քիմիական, կենսաբանական, ճառագայթային, միջուկային՝ CBRN տեխնիկական խորհրդատու (Շվեյցարիա),

Քրիստոֆ Լիբոն՝ Փարիզի հրդեհային բյուրոյի թունավոր նյութերի և քիմիական, կենսաբանական, ճառագայթային, միջուկային՝ CBRN տեխնիկական խորհրդատու (Ֆրանսիա),

Մալվիանա Հեդեն՝ շրջակա միջավայրի ինժեներ (Շվեդիա):

Փորձագետները հանդիպել են նախարար Դավիթ Տոնոյանին, եղել «Նաիրիտ» գործարանում, զրուցել գործարանի տնօրենի հետ: Փորձագետներին է ներկայացվել նրանց հետաքրքրող ամբողջ տեղեկությունը. գործարանի պատմություն, հրդեհից հետո ստեղծված իրավիճակ, հրդեհից այրված պահեստարանների վիճակ, գործարանում պահվող նյութերի տեսակներ և այլն:

Հաջորդիվ փորձագետները կուսումնասիրեն մեր օրենսդրական դաշտը (քիմիական նյութերի և թափոնների պահպանում, իրացում, չեզոքացում, մարդկանց և շրջակա միջավայրի համար առկա ռիսկեր և այլն), հետազոտություններում կներգրավվեն շահագրգիռ պետական մարմինների ներկայացուցիչներ:

Ուսումնասիրություն-հետազոտությունը կավարտվի սեպտեմբերի 22-ին, որից հետո կներկայացվի խնդրի լուծման առաջարկների փաթեթ:

«Նաիրիտից» եկող ռիսկերը գնահատելու հարցում ներգրավվելու պատրաստակամություն է հայտնել նաև Հայաստանի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման օպերատոր «Վեոլիա Ջուր» ընկերությունը: ԱԻ նախարար Դավիթ Տոնոյանի հետ հանդիպման ժամանակ ընկերության գլխավոր տնօրեն Կրիստիան Լըֆեն ասել է, որ «Վեոլիա Ջրի» կազմում կան մասնագիտացված ընկերություններ, որոնք կարող են օգտակար լինել:

Կողմերը պայմանավորվել են «Վեոլիա Ջուր» ընկերությանը փոխանցել «Նաիրիտի» վերաբերյալ տեղեկություններ, անհրաժեշտության դեպքում ընկերության փորձագետները կգան Հայաստան՝ խնդրի լուծման առաջարկ կազմելու համար: ■

«Խոսրովի» անտառում թաքնված հրդեհի օջախները դեռ չմարած՝ սեպտեմբերի 3-ին հրշեջ-փրկարարները նոր ահազանգ ստացան: Հրդեհ էր Բյուրականի անտառում: Արագածոտնի մարզային փրկարարական վարչության արագ արձագանքման խումբը մոտեցավ կրակված անտառահատվածին:

Վառվում էր 20 հա չոր բուսածածկ տարածք: Մեկուսացրին կրակը, մարեցին: Հաջորդ օրը ծագեցին հրդեհի նոր օջախներ: Արագածից փչող քամին բորբոքում էր կրակը, գոյացնում նոր օջախներ, մոտենում անտառամոտ գյուղերին:

Անտառի քարտեզը

Կրակված անտառից քիչ հեռու տեղակայվեց շտաբ՝ վրանային ճամբար: Հրդեհաշիջումը կոորդինացնում էին փրկարար ծառայության տնօրեն, փ/ծ գնդապետ Մուշեղ Ղազարյանը, փրկարար ուժերի վարչության պետ, փ/ծ գնդապետ Հովհաննես Եմիշյանը՝ ներգրավելով փրկարարական նոր ուժեր՝ Երևանից, Արարատից, Կոտայքից, Արագածոտնից, Արմավիրից ու Գեղարքունիքից, Բյուրականի, Անտառուտի և Օրգովի, Ջորափի գյուղերի բնակիչների, զինվորների: Գործին միացավ փրկարարական ուժերի ընտրանին՝ հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնը:

Շտաբում տեղամասերի բաժանված անտառի քարտեզն էր: Հրշեջ ամեն խումբ իր տարածքի համար էր պատասխանատու՝ ապահովված ռադիոկապով, ազդակոչ նշանաբանով: Փրկարարների զորքը սփռված էր անտառով մեկ: Սկսվեց փրկարարական զորքի զօր ու գիշերային թեժ կռիվը կրակի դեմ: Հրդեհը «Խոսրովին» նման չէր. այնտեղ գիհուտն էր վառվում, կրակը թափանցում էր խիտ տորֆային զանգվածի տակ և գոյացնում մխացող, թաքնված հրդեհներ, այստեղ՝ չոր խոտ էր՝ գետնատարած: Բյուրականում փշատերև ծառատեսակները քիչ են, լայնատերևներն են շատ՝ կաղնի, թխկենի, հացենի… դրանք դժվարությամբ են այրվում: Նույնն էր լեռնային լանդշաֆտը, ինչը դժվարացնում էր շիջումը: Բյուրականում էլ աշխատեց ավիացիան: ՊՆ ուղղաթիռը ճշտեց հրդեհի օջախները, տարածման ուղիները, վտանգավոր տեղամասեր իջեցրեց փրկարար-դեսանտայինների: Բարձրլեռնային առանձին տեղամասերում շիջում կատարվեց ուղղաթիռով: Ծխացող օջախները գտնելու և հրդեհաշիջման եղանակներ ընտրելու համար օդ բարձրացվեց նաև անօդաչու թռչող սարք: Հատուկ լուսավորությամբ կրակի դեմ պայքարը շարունակվում էր նաև գիշերը: Շիջում էին ամեն հնարավոր միջոցներով՝ խոնավ լաթերով, ռետինե մտրակով, ծառի ճյուղերով, փորող, քերող, կտրող գործիքներով: Կրակի տարածումը կասեցվեց նաև բուլդոզերներով՝ ակոսներով կտրելով բոցկլտացող դժոխքի ճանապարհը: Որտեղ կարող էր մոտենալ ամենագնաց հրշեջ մեքենան, կրակը մարվում էր ջրով:

Հերթափոխը զեկուցում էր արվածի մասին՝ չհասցրած-չարվածը թողնելով թարմ ուժերով համալրված հաջորդին. ներգրավվում էին նոր հաշվարկներ, օժանդակ տեխնիկա:

3

ՀԱՅ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Հայ-ճապոնական հարաբերությունների հաստատման 25-ամյակի առիթով այս տարի կազմակերպվելու են մի շարք միջոցառումներ: Այս մասին տեղեկացրել է մեր երկրում Ճապոնիայի դեսպան էյջի Տագուչին: Երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1992-ի սեպտեմբերի 7-ին: Հենց տարեդարձի օրը ՀՀ ԱԻ նախարար Դավիթ Տոնոյանը Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) Ուզբեկստանի գրասենյակի գլխավոր ներկայացուցիչ էյջի Ասամիի հետ ստորագրեց «Հակահրդեհային սարքավորումների բարելավման ծրագրի համար» դրամաշնորհի համաձայնագիր՝ 14 մլն դոլար արժեքով:

Իսկ սեպտեմբերի 6-ին Դավիթ Տոնոյանը և էյջի Տագուչին ՀՀ արտգործնախարարությունում ստորագրել էին նույն ծրագրի հայտագրերի փոխանակմամբ կնքվող դրամաշնորհի համաձայնագիրը, ըստ որի՝ Ճապոնիան 2015-2016 թթ. Սյունիքի, Լոռու և Շիրակի մարզերի հրշեջ-փրկարարական ջոկատների տեխնիկական վերազինման նպատակով Հայաստանին տրամադրելու է 36 հրշեջ մեքենա և 3 շարժասանդուղք:

Սեպտեմբերի 8-ին Ճապոնիայի դեսպան էյջի Տագուչին պատվոգիր է հանձնել Լոռու մարզային փրկարարական վարչության Սպիտակի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար, փ/ծ փոխգնդապետ Սերոբ Գաբրիելյանին՝ Հայաստանի և Ճապոնիայի միջև բարեկամության ու փոխըմբռնման խորացմանը նպաստելու նրա նշանակալի ծառայության համար: *«Նման պարգևները միայն գնահատանք չեն, նաև խթանում են մեր բարեկամությունն ու համագործակցությունը: Իսկ այսօր մեր երկու երկրների կառավարությունների համագործակցությունը բարձր մակարդակի վրա է: Այս հարաբերությունները միայն խոսքով չէ, նաև գործով է պարբերաբար հաստատվում»,*- նշել է Սերոբ Գաբրիելյանը:

Ի դեպ, Երևանում սեպտեմբերի 17-ին նախատեսվում է անցկացնել ճապոնական մարտարվեստի փառատոն, որին մասնակցելու են Ճապոնիայից ժամանած կարատեի երկու վարպետ: Հոկտեմբերին Երևանում, Էջմիածնում և Գյումրիում կազմակերպվելու է ֆիլմերի փառատոն, իսկ նոյեմբերին Երևանում տեղի կունենա ճապոնացի երաժիշտների համերգը: Ճապոնիայի դեսպանատունը ՀՀ մշակույթի նախարարության հետ համատեղ համերգ կկազմակերպի նաև Վանաձորում:

Մեր թերթի նախորդ համարում տպագրված՝ Ստեփան Բաղալյանի «Արտակարգ իրավիճակների համակարգի ձևավորման ակունքներում» հարցազրույցի շարունակությունը կարող եք ընթերցել առաջիկա համարներից մեկում:

911 Արտակարգ թերթ
N 34 (682)
15-21 սեպտեմբերի, 2017

Զորքը

Փրկարարական զորքը շարվեց: Շտաբի հրամանատարությունը շնորհակալություն հայտնեց փրկարարներին անձնուրաց աշխատանքի համար և բոլոր նրանց, ովքեր նպաստ ունեցան դժվարին գործում: Մուշեղ Ղազարյանը հրահանգեց՝ զորքը դուրս է գալիս անտառից, ու քանի որ առաջիկա օրերին օդի ջերմաստիճանի բարձրացում է սպասվում, սահմանվեց հերթապահություն:

Դրկտրտր ոլմեր
3

ՀԱՏՈՒԿ ՋՈԿԱՏԱՅԻՆՆԵՐԸ

Բյուրականի անտառը՝ վտանգի մեջ

2 Այս հրդեհի մարմանն էլ կամավորներ մասնակցեցին: Երևանի բնակիչ Ալեքսան Սամսոնյանը փրկարարներին տրամադրեց իր կվադրոցիկլը: Երեք օր նա ջուր էր հասցնում անհաս բարձունքներ, տրակտորին կցված բաքով ճանապարհ բացում ծառերի խիտ սաղարթում, անանցանելի թփուտներում:

Սեպտեմբերի 7-ին հրդեհը մեկուսացվեց: Փրկարարներն անցան հետմարման գործին: Վտանգը մեծ էր, դեռ մխում էին քարերում մխրճված վառվող ծառարմատները, և քամին, շոգը ծխացող նոր օջախներ էին առաջացնում: Օրվա լույսի հետ երևում էր ծուխը, գիշերվա սառը օդը քնեցնում մխացող կրակը, արևի հետ ծխում ու նորից ոտքի հանում փրկարարներին:

Հատուկ ջոկատը

Սեպտեմբերի 9-ի աղջամուղջին հատուկ փրկարարական ջոկատի հերթափոխը շարժվեց Բյուրական: Օր առաջ էին վերադարձել անտառից: Կատակում էին, չնայած հայացքներում անհանգստություն կար: Մտքով Բյուրականում էին՝ ուզում էին անտառն այլևս անկրակ տեսնել: Շտաբից կապով կանչ էին տվել՝ դեռ մխացող օջախներ կան:

Ջոկատի հրամանատար, փ/ծ մայոր Զավեն Մելքոնյանի հրահանգով փ/ծ ենթասպա Զուրաբ Վարդանովը փրկարարական կապույտ Mersedes Benz-ը շարժի դրեց: Բյուրականի վերջին խանութն էր, կանգ առան, քաղցրավենիք, հյութեր, ծխախոտ գնեցին: Անցան Օրգովն ու Անտառուտը: Քիչ անց արևի առաջին ճառագայթների մեջ երևաց անտառամիջով ձգվող ճանապարհը: Երկայնքով ISUZU-ներն էին ու դրանց շուրջը բոլորած հերթապահները: 10 տոննանոց հսկաները ջուր էին մատակարարում ամենագնացներին: Նոր առաջադրանքի էին սպասում կամ արդեն ստացել, կատարում էին: Mersedes-ը մտավ ճամբար: Եռուզեռ էր, վրաններ, «Ուրալ-կունգեր», Ճգնաժամային կառավարման կենտրոնի «911»-ի մեքենաներ: Ռադիոկապը ծվատում էր եթերը: Ճամբարում լարված սպասման իրավիճակ էր:

Զավեն Մելքոնյանը Հովհաննես Եմիշյանից առաջադրանք ստացավ. Ապարան տանող ճանապարհեզրի անտառախիտ բարձունքներում ծխացող օջախներ դեռ կան: Պետք է մարեին՝ բենզինաշարժիչով աշխատող 25 լ տարողությամբ ուսապարկ-կրակմարիչներով: Ջոկատին կցվեց Ավանի հրշեջ մասի Mersedes Benz Unimog ամենագնացը՝ հազար լիտր ու քիչ ավելի ջրատարողությամբ: Զուրաբ Վարդանովը մեքենան շարժեց սարն ի վեր՝ ամենագնացին ընդառաջ՝ հաղթահարելով ծխից սևացած բլուրներ, ձնհալից գոյացած հեղեղատներ: Սևացած բներով կաղնու ծառերը ուրվականների էին նման, մոխրից դուրս ցցված ծառաբներից վերև շոգեխաշված սաղարթն էր՝ խեղճացած, աղերսով դեպի արևը սլացող՝ ապրել-գոյատևելու տենչով: Արևոտ, շոգ եղանակ էր, բայց աշխարհը սև էր երևում: Հեռվում Արագածի մարդանման գագաթներն էին՝ հայացքով դեպի մրված անտառը: Անհավատալի էր, սև խոտածածկույթին երևում էին անցած օրերին բլուրներն ակոսած հրշեջ մեքենաների անիվների դեղին ժապավենները՝ և այնքան շատ փաթաթված ու խճճված: Զարմանք էր, այդ ինչպես են կարողացել անցնել ժեռ զառիթափերով: Ու դեպի վեր քա՜նի անգամ ու քա՜նի մեքենա ջուր էր հասցվել անտառափեշերով:

Դեպի ծխացող կրակը

Հատուկջոկատայինները գտան իրենց տեղամասը: Վարդանովի մեքենան դիրքավորվեց հարթավայրի մի կետում, որտեղից տեսանելի էին կաղնուտ անտառի բարձունքները: Ծխում էին օջախներ: Զավեն Մելքոնյանը ջոկատը բաժանեց երկու խմբի: Փ/ծ ենթասպաներ Սամվել Կոլյանը, Գեորգի Մխիթարյանը, Վահե Տեր-Վարդանյանը, Կառլեն Հովհաննիսյանը, խմբի հրամանատար, փ/ծ կապիտան Վարազդատ Սեդրակյանը շարժվեցին դեպի ծուխը:

Ամենագնացը բարձրացավ թաքնված կրակին մոտիկ, բայց անկարող էր շատ մոտենալ, վերելքը խիստ դժվարացավ: Լիցքավորվեցին ջրով: Վահեն շալակեց սրսկիչը, մյուսը՝ վարորդին օգնելու եկած Նիկողայոս Հաջյանը, թևին առավ ծանր ջրաբաքը: Ծառերի մեջ ծուխը չէր երևում: Հրամանատարը ներքևից ռադիոկապով ուղղորդում էր խմբին: Գտան թաքնված վտանգը՝ մխում էին ծառերից թափված չորուկն ու տերևը: Ջուրը փոշի դարձած իջնում էր կրակին: Տղերքը փորում էին հողը ձեռք ու բրիչով, մտնում քարի տակ, հող ու տերև խառնում իրար, մոխիրը դարձնում ցեխ, որ էլ չմխա: Դժվար էր ճանապարհը, այրված ծառաբներն ու խիտ թփուտները խանգարում էին շարժին: Հանգցրին: Նորից ստուգեցին, փորեցին սևացած քարի խորքերը: Ջուրը կարող էր հասած չլինել քարի մեջ մխրճված ծառարմատներին: Շարժվեցին, վերևում նոր օջախ կա: Դա էլ մարեցին: Սամվել Կոլյանը նորը գտավ, բայց ջուրը վերջացավ: Խմբընկերը՝ Վահե Տեր-Վարդանյանը, կապ տվեց՝ ջուր հասցրեք՝ ասավ: Զրաբաքը բերեցին: Լիցքավորեցին սրսկիչը: Էլի՛ նոր օջախ: Գեորգի Մխիթարյանը փտած, փոքրիկ կոճղերը կտրում էր գետնից, դնում ժեռ քարին ու ջրով մարում, հետո ձեռքով տրորում թեթև հովիկից կայծկլտացող, շիկացած ածուխը: Հետո համբերատար սպասում, հետևում արդյունքին ու կրծքով հարթելով, տրորելով թավուտի դիմադրությունը՝ շարժվում առաջ, նրա հետ՝ Կառլենը Հովհաննիսյան: Վերջին կաթիլն էլ վերջացավ: Նորից կապ տվեցին... Սպասում են ջրին:

Վերևում վերջին օջախը մնաց: Զավեն Մելքոնյանը տեսնում է ծուխը: Վարազդատ Սեդրակյանին չի երևում օջախը, չգիտե՝ ո՞ր կողմից մոտենա: Գտավ մխացող հրեշին: Նետվում են առաջ: Այլ օջախներ էլ գտան, կտրվեց ծուխը:

Շրջված ամենագնացը

Կեսօրն անց է: Ծուխ չի երևում: Հանգստանալ է պետք ու միաժամանակ սպասել: Ծուխը կարող է էլի կախվել ծառերի վրա: Իջնում են դեպի ամենագնացը: Մեքենան կանչով անցել է նոր անտառաբացատ: Նրա հետ է Գեորգի Մխիթարյանը: Հանկարծ լուր տարածվեց՝ մեքենան զառիթափին գլխիվայր շրջվել է: Հասան օգնության: Դիմապակու փշուրներից արնածորում էր Գեորգիի թևը: Վնասվել էր վարորդ Ավետիք Պողոսյանի ձախ արմունկի հոդը:

Երեկոն մոտ էր: Հովհաննես Եմիշյանը Ապարանի հրշեջ ջոկատին հրահանգեց «կունգ» ուղարկել: Վթարված մեքենան դժվար տեղանքից դուրս բերել էր պետք: Օգնությունը եկավ: Պողպատե ճոպանը կապվեց մեքենային, որ անիվների վրա շրջելիս ամենագնացը չգլորվի ձորը: 10-15 փրկարարներ ուղղեցին մեքենան, ճոպանից կապած, դժվարությամբ դուրս բերեցին ուղիղ ճանապարհ:

Լիալուսինը

Պատահարից տղաները տխուր էին, նստած հին դամբարանաբլրի եզրին, երեսները՝ մուր, դեռ «Խոսրովի» հրդեհից այրված կոշիկներով, լուռ ու ակնդետ, հետախույզի հայացքով սանրում էին անտառի բարձունքները: Ծուխ չէր երևում: Շտաբից սպասում էին հրդեհաշիջման ավարտ-հրահանգին: Հանկարծ ծխանշույլ նկատվեց: Տղերքի հայացքը ծխին էր: Ծուխը երկարեց, մի պահ թանձրացավ, հետո անհետացավ ու էլ չերևաց: Պահմտոցի էր կարծես:

Կվադրոցիկլով հեռվում երևաց Մուշեղ Ղազարյանը: Զավեն Մելքոնյանը ներկայացրեց իրավիճակը. ծխի օջախներ էլ չկան՝ զեկուցեց նրան: Գնդապետը շարժվեց դեպի բարձունքներ՝ անձամբ համոզվելու: Վերադարձավ ուշ: Հրահանգեց վերադառնալ ճամբար: Ամփոփիչ խորհրդակցություն էր լինելու:

Շտաբում անտառի քարտեզի շուրջ բոլորած՝ ԱԻՆ-ականները անտառտնտեսության, հարակից համայնքների ներկայացուցիչներին ներկայացրեցին արդյունքները, և տրվեց հրդեհաշիջման ավարտ-հրահանգը:

Փրկարարական զորքը շարվեց: Շտաբի հրամանատարությունը շնորհակալություն հայտնեց փրկարարներին անձնուրաց աշխատանքի համար և բոլոր նրանց, ովքեր նպաստ ունեցան դժվարին գործում:

Մուշեղ Ղազարյանը հրահանգեց՝ զորքը դուրս է գալիս անտառից, ու քանի որ առաջիկա օրերին օդի ջերմաստիճանի բարձրացում է սպասվում, սահմանվեց հերթապահություն:

Աղջամուղջ էր: Զորքը դուրս եկավ ճամբարից: Փրկարարական հատուկ ջոկատը շարժվեց Երևան: Լիալուսինը կախվել էր անտառի գլխին և հավերժական լուռ ժպիտով կարծես զգուշորեն ծխի քուլա էր որոնում: ■

Գագիկ ԵՂՅԱՆ
Բյուրական

911 Արտակարգ թերթ
N 34 (682)
15-21 սեպտեմբերի, 2017

Մեծամասշտաբ ու բազմազգ

Վարժանքների ծրագրով նախատեսված է ինչպես տեսական մաս՝ քննարկումներ, այնպես էլ գործնական՝ օրվա լույս և մութ ժամերի համար: Վարժանքի տված դասերը դառնում են ուսուցողական նյութ երկրների քաղաքացիական պաշտպանության համակարգերի և փրկարարական ստորաբաժանումների համար:

Դրսևորում ուներ
4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՐԿԱՐԱՐՆԵՐԸ ԿՄԱՍՆԱԿՑԵՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՆՔՆԵՐԻ

Փորձի փոխանակման լավ առիթ աշխարհի փրկարարների համար

Սեպտեմբերի 24-30-ը Բոսնիա-Հերցոգովինայում կանցկացվի Հյուսիսատլանտյան դաշինքի՝ ՆԱՏՕ-ի «Աղետների արձագանքման եվրոատլանտյան կենտրոնի» (Euro-Atlantic Disaster Response Coordination Centre՝ EADRCC) կազմակերպած «Բոսնիա-Հերցոգովինա 2017» տարերային աղետների հետևանքների վերացման միջազգային դաշտային վարժանքը: Նման վարժանք կազմակերպվում է արդեն 18-րդ անգամ: Իսկ սեպտեմբերի 17-21-ը Մոլդովայում դաշտային վարժանք կանցկացվի Եվրամիության «Տարերային և տեխնածին աղետների կանխարգելում, պատրաստվածություն և արձագանքում Արևելյան գործընկերության երկրներում» (Prevention, Preparedness and Response to Natural and Man-made Disasters in the Eastern Partnership Countries՝ PPRD East-2) ծրագրի շրջանակներում՝ EU MOLDEX 2017: Հայ փրկարարները կմասնակցեն երկու վարժանքին էլ: Մոլդովա կմեկնի 24 փրկարար, Բոսնիա-Հերցոգովինա՝ 47 փրկարար:

Մոլդովա

«Տարերային և տեխնածին աղետների կանխարգելում, պատրաստվածություն և արձագանքում Արևելյան գործընկերության երկրներում» (PPRD East-2) ծրագիրը մեկնարկել է 2010 թվականին (2010-2014 հատվածում՝ PPRD East-1, 2014-ից մինչ օրս (PPRD East-2), և այդ ընթացքում եղել են քննարկումներ, համաժողովներ: EU MOLDEX 2017 դաշտային վարժանքն առաջինն է: Կմասնակցեն Արևելյան գործընկերության բոլոր երկրները՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ուկրաինա, Բելառուս, Մոլդովա, նաև Չեխիան, Դանիան, Ռումինիան: EU MOLDEX 2017 դաշտային վարժանքում Հայաստանի պատվիրակության ղեկավարն է ԱԻՆ փրկարար ծառայության Ծառայության կազմակերպման վարչության պետ, փ/ծ գնդապետ Մկրտիչ Ուլիկյանը: Ներգրավված է քաղաքային որոնողափրկարարական մեկ թիմ՝ 14 հոգի, երկու բժիշկ, կենսաբանական, ճառագայթային, միջուկային մոնիթորինգ իրականացնող հինգ մասնագետ, թիկունքի ապահովման մեկ մասնագետ: Հայաստանը երկու ներկայացուցիչ կունենա վարժանքի ղեկավար կազմում:

Վարժանքի սցենարի համաձայն՝ տեղի է ունեցել ուժեղ երկրաշարժ, փլվել են բազմաթիվ շենքեր, ջրամբարների պատվարներ են վնասվել, թունավոր և վտանգավոր նյութեր տեղափոխող տրանսպորտային միջոցներ են վթարվել: Մոլդովան միջազգային օգնություն է խնդրում: Վարժանքի նպատակն է ստուգել PPRD East ծրագրի մասնակից երկրների փրկարարական կարողությունները: Շեշտը դրվելու է միջազգային համագործակցության վրա, սակայն Մոլդովան հնարավորություն է ունենալու արձանագրել օգնություն խնդրող՝ «հյուրընկալ» երկրի փրկարարներ ընդունելու կարողությունների հնարավոր բացերն ու նախանշել շտկումների ու զարգացումների ուղղությունները:

Բոսնիա-Հերցոգովինա

«Աղետների արձագանքման եվրոատլանտյան կենտրոնի» տարերային աղետների հետևանքների վերացման 18-րդ միջազգային դաշտային վարժանքին կմասնակցի 30 երկրի փրկարար (Հայաստան, Ավստրիա, Ադրբեջան, Բելառուս, Բելգիա, Բուլղարիա, Խորվաթիա, Չեխիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Վրաստան, Գերմանիա, Իսրայել, Իտալիա, Ճապոնիա, Մոլդովա, Մոնտենեգրո, Նիդերլանդներ, Նորվեգիա, Պակիստան, Ռումինիա, Սերբիա, Սլովենիա, Իսպանիա, Շվեդիա, նախկին հարավսլավական հանրապետություն՝ Մակեդոնիա, Ուկրաինա, Միացյալ Թագավորություն, ԱՄՆ): Այսպիսի վարժանքներ EADRCC-ը կազմակերպում է ամեն տարի: 2010 թվականին

վարժանքն անցկացվել է Հայաստանում, մասնակցել է 20 երկիր: «Բոսնիա-Հերցոգովինա 2017» դաշտային վարժանքում Հայաստանի պատվիրակության ղեկավարն է ԱԻՆ փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների հետևանքների վերացման կազմակերպման վարչության պետի տեղակալ, փ/ծ գնդապետ Արմեն Մուրադյանը: Ներգրավված են քաղաքային որոնողափրկարարական մեկ թիմ՝ 30 հոգի, քիմիական, կենսաբանական, ճառագայթային, միջուկային մոնիթորինգ իրականացնող վեց մասնագետ, երեք ջրասուզակ: Մենք ներկայացուցիչներ կունենանք վարժանքի ղեկավար կազմում, գնահատողների, դիտորդական խմբերում, միջազգային ուժերի համակարգման կենտրոնում:

Վարժանքի սցենարի համաձայն, Բոսնիա-Հերցոգովինայի հյուսիս-արևելքում հորդառատ անձրևներից վարարում է Սավա գետը, հետո այլ գետեր, ու վտանգվում են ջրամբարներ, ջրհեղեղ է սկսվում՝ վնասելով Տուզլա, Լուկավաչ, Գրաչանիկ քաղաքները, Մոդրիկ լճի մատույցների և լիճը թափվող Սփրեչա գետի երկայնքով տեղակայված գյուղերը: Մոտակա լեռան լանջերի սողանքներն են ակտիվանում, տուժում է 40 շենք և 160 առանձնատուն, այդ թվում՝ դպրոցներ, բուժհաստատություններ, վնասվում՝ 15 կամուրջ, տասնյակ ճանապարհներ են ավերվում, ջուրը քշում է հարյուրավոր ընտանի կենդանիներ, տարհանվում է 1500 մարդ, անհետ կորած է 20-ը, առողջապահական հաստատությունները գերբեռնված են, հաստատվել է, որ աղտոտված է խմելու ջուրը, սննդի պակաս է զգացվում, չհաստատված լուրեր կան, որ նախկինում ականապատ և ականազերծված տարածքից ջրի հոսքը չպայթած ականներ է բերել: Երկրի իշխանությունը մտածում է միջազգային օգնություն խնդրելու մասին: Այս աղետից մեկ օր անց գրանցվում է 5 մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժ: 12 վայկյան տևած ցնցումներից զոհվում է 30 մարդ, հանքերից մեկում հանքափորներ են արգելափակվում հողի տակ, վնասվում են հին շենքեր, արդյունաբերական ձեռնարկություններից մեկում թունավոր նյութերի արտահոսում է եղել, մեծապես տուժում են հաղորդակցության ուղիներն ու միջոցները: Սեյսմոլոգները չեն բացառում, որ ցնցումներ դեռ էլի կլինեն, ինչից կարող են վնասվել ջրամբարների պատվարները: Երկրի ազգային միջոցները բավարար չեն ու միջազգային անհապաղ օգնության խնդրանք է տարածվում:

«Աղետների արձագանքման եվրոատլանտյան կենտրոնում» վստահ են, որ միջազգային դաշտային վարժանքները տարբեր երկրների փրկարարների միջև փորձի փոխանակման հիանալի հնարավորություն են: ՆԱՏՕ «Աղետների արձագանքման եվրոատլանտյան կենտրոնը» հիմնադրվել է 1998 թվականին աղետների կառավարման և աղետյալ երկրներին միջազգային օգնություն հասցնելու գործիք է: Հիմնադրման օրվանից մինչ օրս կենտրոնն ավելի քան 60 անգամ արձագանքել է աղետից տուժած երկրների օգնության խնդրանքներին:

Այսպիսի մեծամասշտաբ ու բազմազգ վարժանքների ծրագրով նախատեսված են ինչպես տեսական մաս՝ քննարկումներ, այնպես էլ գործնական մաս՝ օրվա լույս և մութ ժամերի համար: Վարժանքի տված դասերը դառնում են ուսուցողական նյութ երկրների քաղաքացիական պաշտպանության համակարգերի և փրկարարական ստորաբաժանումների համար: ■

Արամ ՁԱՔԱՐՅԱՆ

Հ.Գ. *«Բոսնիա-Հերցոգովինա-2017» և EU MOLDEX 2017 վարժանքներում մեր փրկարարների գրանցած արդյունքների մասին՝ վարժանքներից հետո:*

ՕԳՈՍՏՈՍԻ ԽՈՇՈՐ ՀՐԴԵՀՆԵՐԸ

2017 թվականի օգոստոսին ՀՀ ԱԻՆ պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչությունում հաշվառվել է 522 հրդեհ՝ 120 միլիոն դրամի նյութական վնասով, վնասվածք է ստացել 3 մարդ:

Խոշոր հրդեհներից են.

1. 1 օգոստոսի, Լոռու մարզ, գյուղ Հաղպատ, «Վ.Մ.ՏորգՍերվիս» ընկերության տարածք: Նյութական վնասը՝ 3 000 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ արևի ճառագայթների ֆոկուսացում:

2. 10 օգոստոսի, Սյունիքի մարզ, քաղաք Ագարակ, «ՄԱԿ» մակնիշի ավտոմեքենա: Նյութական վնասը՝ 57 400 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ պարզաբանվում է:

3. 12 օգոստոսի, քաղաք Երևան, Սարի թաղի 21 փողոց, թիվ 2ա տուն: Նյութական վնասը՝ 5 000 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ գազի արտահոսք:

4. 13 օգոստոսի, Արագածոտնի մարզ, գյուղ Բազմաղբյուր, խոտի դեզ և «Զիլ» մակնիշի ավտոմեքենա: Նյութական վնասը՝ 2 800 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ երեխայի խաղը կրակի հետ:

5. 24 օգոստոսի, Արարատի մարզ, գյուղ Սիս,

Մ.Սպարապետ փողոց, թիվ 1 տուն: Նյութական վնասը՝ 5 000 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ գազի արտահոսք: ■

Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչություն

ՄԻԳՐԱՑԻՈՆ ԽՈՒԹԵՐ

ՀՀ միգրացիոն պետական ծառայությունը շուրջ 15 հազար անձի հարցով դիմել է Ռուսաստանի միգրացիոն ծառայությանը՝ նրանց նկատմամբ կիրառվող ՌԴ մուտքի արգելանքը վերացնելու հարցով: *«Այդ երկիրը պատժամիջոցներ է սահմանել այն ժամանակ, երբ անձը, որ խախտումներ է թույլ տվել, դուրս է եկել երկրի տարածքից: Երբ 2014-ին սկսվել է այս գործընթացը, շուրջ 3 մլն մարդ հայտնվել է բարդ իրավիճակում»,-* Ազգային ժողովում ասել է Միգրացիոն պետական ծառայության պետ Գագիկ Եգանյանը: Նա հայտնել է, որ իրենք մոտ 15 հազար քաղաքացու հարցով դիմել են ՌԴ գործընկերներին, 6 հազար ՀՀ քաղաքացիների նկատմամբ պատժամիջոցները վերացվել են: *«Մենք*

նաև խնդրել ենք, որ ՌԴ-ում գտնվող անձինք, ովքեր նման խնդիր ունեն և վախենում են դուրս գալ երկրից, և եթե նրանց խախտումները փոքր են, նրանց մեղմ վերաբերվեն: Դա նույնպես հարգվել է. այս դեպքում 22 հազար անձի նկատմամբ պատժաչափը վերացնելու մասին է»,- պարզաբանել է Գագիկ Եգանյանը: ■

911 Արտակարգ թերթ
N 34 (682)
15-21 սեպտեմբերի, 2017

Անցած օրեր

1991-1993-ին՝ Արցախյան հակամարտության տարիներին, պարբերաբար հերթապահում էինք Կապանում, հրետակոծությունից բռնկված հրդեհներն էինք մարում: Դրանք այնքան շատ էին, որ Կապանի հրշեջ մեքենաները չէին բավականացնում: Հրդեհաշիջման ժամանակ արկերը մեր գլխավերևով էին թռչում: Տեխնիկան հին էր, փողրակները՝ մաշված, հազիվ էինք կարողանում մարել կրակը:

ՔԱՋԱՐԱՆԻ ՀՓՋ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ

29 տարի ծառայության մեջ

«24 տարի է՝ ծառայության մեջ եմ՝ որպես հրամանատար, բայց այս տարիներին հազիվ թե 24 օր լինի, որ այս շենքից ներս մտած չլինեմ, ինչպես նաև մատների վրա հաշված դեպքեր կլինեն, որոնց մասնակցած չլինեմ, դա էլ այն դեպքում, երբ բացակայել եմ քաղաքից կամ գործուղումների մեջ եմ եղել»,- մեզ հետ զրույցում անկեղծանում է Քաջարանի ՀՓՋ-ի հրամանատար, փ/ծ փոխգնդապետ Արայիկ Մկրտչյանը: Հրամանատարի մուտքն այս համակարգ լրիվ պատահական ստացվեց: Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի մեքենաշինական ֆակուլտետն ավարտած ինժեներ-մեխանիկը չէր էլ պատկերացնում, որ իր ընտրած մասնագիտությունը թողած կհիմնավորվի մեկ այլ ոլորտում:

1988-ն էր, երբ տեղեկացավ, որ ներքին գործերի նախարարության հրշեջ պահպանության վարչության Քաջարանի թիվ 51 մասնագիտացված հրշեջ մասում մասնագետի կարիք կա. ընդունվեց հակահրդեհային պրոֆիլակտիկայի գծով հրահանգիչ: Երեք տարի հրահանգիչ աշխատելուց հետո նշանակվեց հրշեջ մասի պետի տեղակալ, իսկ 1993-ից արդեն ստանձնեց հրշեջ մասի պետի պաշտոնը, 2003-ից էլ կառուցվածքային փոփոխության արդյունքում վերանշանակվել է Քաջարանի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար: *«29 տարի է՝ այս շենքի պատերի ներսում են օրերս անցնում: Արագ են սահել տարիները, չեմ մտածել, որ հիմնովին կհաստատվեմ ջոկատում, բայց այնքան հարազատ դարձավ միջավայրը»,*- հետհայացք գցելով անցած-գնացած օրերին՝ հիշում է հրամանատարը: Նոր կադրեր է կրթել ու մասնագիտացրել և մինչև օրս կապի մեջ է նախկին աշխատակիցների հետ:



Մասնակցել է 300-ից ավելի հրդեհի մարման և 100-ից ավելի փրկարարական աշխատանքների: Պատմում է, որ առաջին տարիներին հիմնականում հրդեհի վերաբերյալ ահազանգերի հետքերով էին գնում: *«1991-1993-ին՝ Արցախյան հակամարտության տարիներին, պարբերաբար հերթապահում էինք Կապանում, հրետակոծությունից բռնկված հրդեհներն էինք մարում: Դրանք այնքան շատ էին, որ Կապանի հրշեջ մեքենաները չէին բավականացնում: Հրդեհաշիջման ժամանակ արկերը մեր գլխավերևով էին թռչում: Տեխնիկան հին էր, փողրակները՝ մաշված, հազիվ էինք կարողանում մարել կրակը»,*- հին օրերի դժվարություններն է հիշում Արայիկ Մկրտչյանը:

Այդ օրերից շատ բան է փոխվել: Փրկարարներն այսօր արձագանքում են ոչ միայն հրդեհների, այլև ամեն տեսակի կանչերի: Նախկինի համեմատ, այժմ ունեցած գույք-սարքավորումների հագեցվածության շնորհիվ հաջողվում է արագ արձագանքել դեպքերին: Փորձառու հրամանատարն ընդգծում է, որ ամենակարևորը ճիշտ մոտեցումն է, հակառակ դեպքում ընթացքն այլ զարգացում կունենա: Հրամանատարն ուրախությամբ է փաստում, որ ճիշտ գործելու արդյունքում ջոկատի անձնակազմին հաջողվեց մարել մի քանի տարի առաջ Քաջարանի կոմունալ տնտեսական արտադրական վարչության ավտոհավաքակայանում վառելիքի արտահոսքից բռնկված խոշոր հրդեհը և կրակի տարածումը: Խոշոր մի հրդեհ էլ այս տարի է եղել: *«Փետրվարի 16-ին Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում ավտոհավաքակայանի տարածքում բենզինի հսկա տարաներում փականի խափանման պատճառով վառելիքի արտահոսք էր եղել և վառելիքը բռնկվել էր: Կանխատեսելով հետագա զարգացման անխուսափելի հետևանքները՝ Կապանի ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ օգնության եմ կանչել: Համատեղ ուժերով հրդեհաշիջման աշխատանքների արդյունքում հնարավոր եղավ խուսափել մեծ փորձանքից: Բենզինով լի տարաները եթե բռնկվեին, ապա հետևանքներն աննկարագրելի կլինեին»:*

Քաջարանի հրշեջ-փրկարարական ջոկատը հարկ եղած դեպքում օգնության է հասնում նաև Կապանի, Մեղրու փրկարարներին: Մի քանի տարի առաջ Մեղրիի բազմաբնակարան շենքում բռնկված խոշոր հրդեհի մարմանը մյուս ուժերի հետ մասնակցում էին նաև իրենք:

Ջոկատում, թե տանը հրամանատարը նույն մարդն է, թեև խիստ չէ, բայց կարևորում է կարգուկանոնը: Ջոկատում այդպես էլ աշխատում են՝ հետևելով ընդհանուր կանոնին, մեկը մյուսի նկատմամբ հարգանքով և գործի հանդեպ մեծ պատասխանատվությամբ: Փ/ծ փոխգնդապետը հավաստիացնում է՝ ջոկատը մասնագիտական կարողություններով չի զիջում և ոչ մի ջոկատի:

Իսկ ընտանիքին շատ ժամանակ հատկացնել չի հաջողվում: Խոստովանում է՝ հազվադեպ է կարողանում ընտանիքի հետ լինել: Այդ ժամանակ էլ միտքը ջոկատի հետ է, թեև գիտե՝ ՀՓՋ-ում բոլորը գործը լավ գիտեն:

Փոխգնդապետը մեկ աղջիկ ու մեկ տղա ունի: Անին 16 տարեկան է, Ալենը՝ 15: Հրամանատարը կանխատեսում է՝ իր համազգեստով հպարտացող ու փրկարարի շնչով դաստիարակվող որդին էլ իր ուղին կընտրի: *«Երբ ամուսնացա, արդեն այս ջոկոտում էի աշխատում: Կինս՝ Մարինե Հարությունյանը, բուժքույր է, երևի ճակատագիր էր, երկուսս էլ մարդկանց փրկության գործով ենք զբաղվում: Մեր երեխաներին էլ մեծացրել ենք հենց այս մտայնությամբ»,*- ասում է հրամանատարը, որի երկարամյա աշխատանքի լուռ վկաներն են ԱԻ նախարարներից ստացած պարգևները, տարբեր կազմակերպությունների, քաղաքային ու մարզային իշխանությունների կողմից արժանացրած շնորհակալագրերն ու պատվոգրերը: ■

Մերի ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Քաջարան-Երևան

«ԼՈՌԷ»-Ն ՓՈԽԱՆՑՈՒՄ Է ԻՐ ՓՈՐՁԸ

Սեպտեմբերի 8-12-ը «Լոռէ» փրկարարական ջոկատում անցկացվեց «Կրթական-էքստրեմալ ճամբարի կազմակերպում» SKYE ակումբների մասնակցությամբ: Կապանի տարածքային մասնաճյուղն էր անցնում ուսումնական պատրաստվածություն՝ ցուցաբերելով իր փորձն ու գիտելիքները:



Մասնակցում էին 24 երիտասարդներ՝ 16-30 տարեկան՝ հիմնականում հմտանալով արտակարգ իրավիճակների վարքականոնների կիրառման մեջ մեր իրականությունում: Բոլոր իրավիճակները, ուսումնական պարապմունքները կազմակերպել և իրականացրել են «Լոռէ» փրկարարական ջոկատի հրահանգիչները: *«Մեծ ակնկալիքներով էին եկել երիտասարդները, կարծում էին, թե բոլոր փորձությունները հեշտությամբ կանցնեն, բայց հասկացան, որ դրա համար գիտելիքներ են պետք, լուրջ պատրաստվածություն ու հմտություն»,*- ասում է «Լոռէ»-ի հրամանատար Արմեն Առաքելյանը: Նաև պարզաբանում՝ սկսել են ուսուցանել փրկարարական «այբուբենից»՝ հանգույցներ, պարան, պարանի հետ աշխատող գործիքներ. *«Ցույց էինք տալիս մեր իրականության մեջ հանդիպող սխալները, երբ գրագետ չեն վարվում, օրինակ՝ պարանային աշխատանքների հետ: Նաև արշավ կազմակերպեցին, սովորեցին արշավային հիմունքներ, ուսապարկ հավաքել, վրաններ տեղադրել: Ունեցան առանձին դասընթացներ, քարտեզագրություն, տեղագրական քարտեզների պատրաստում, գործնական աշխատանք արեցին՝ ազիմուտների տեղադրում և որոշում: Դաշտային պայմաններում գետանցումներ, բարձրադիր վայրերից՝ աշտարակից վայրէջքներ, բնական խոչընդոտների հաղթահարում»*:

Սեպտեմբերի 11-ին երիտասարդները Ջորագետի վրա զուգահեռ կապված պարաններով են գետանցում կատարել՝ խաղ կազմակերպելով, որպես միջոցառումների վերջաբան: Իսկ երեկոյան հրաժեշտի խարույկ վառել: *«Երիտասարդները յուրացնելով հմտությունները՝ իրենք են ուսուցանելու կրտսերներին:*

Նման ճամբարների կազմակերպումը ևս մեկ հնարավորություն է, որպեսզի հասարակությունը պատրաստ լինի և ճիշտ կողմնորոշվի արտակարգ իրավիճակներում: Այդ նպատակով նրանց տրամադրեցինք ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի և Հայկական կամիր խաչի կողմից հրապարակված գրքեր ու բրոշյուրներ»: ■

Ֆելիքս ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

911
Արտակարգ թերթ
N 34 (682)
15-21 սեպտեմբերի, 2017

Արտակարգ ժամանակներ

Անիի մայր եկեղեցու պատին փորագրված արձանագրություն կա, որտեղ ասվում է, որ շնորհիվ Աստծո, Տեր Սարգսի և Անիի մելիք Փախրադինի առաջնորդությամբ՝ տեղերեցի Մխիթար եպիսկոպոսը, վախենալով երկրաշարժի ավերածություններից (հավանաբար՝ հնարավոր հետևանքները կանխելու համար), արգելում է փողոցում կիրակնօրյա վաճառահանությունը: Վերջում արձանագրված է անեծքի կարճ բանաձև, ըստ որի՝ այդ գիրը ջնջողի վրա կընկնեն քաղաքի մեծ ու փոքր մեղքերը:

Շարակ 6

ՔԱՋԱՐԱՆՑԻ ԼԵՌՆԱՓՐԿԱՐԱՐԸ

Մեր երկրի թվով ամենամեծ՝ 15 հոգուց բաղկացած լեռնափրկարարական ջոկատը, գործում է Քաջարանում և սպասարկում պղնձամոլիբդենային կոմբինատը:

Քաջարանում պղինձ ծուլել են դեռևս բրոնզե դարում. այդ մասին են վկայում քաղաքի տարածքում հայտնաբերված հանքախորշերը, ծուլարանների հետքերը, հանքանյութի թափոնները: Այժմ էլ քաղաքը հայտնի է հանքարդյունաբերական գործունեությամբ, հատկապես ոլորտի հսկայով՝ պղնձամոլիբդենային կոմբինատով, որտեղ աշխատելու համար տարբեր ժամանակներում Քաջարան են տեղափոխվել մարդիկ հանրապետության այլ բնակավայրերից:

Ասատուր Ստեփանյանի ընտանիքը Արարատից է տեղափոխվել Քաջարան, որոշ ժամանակ աշխատել կոմբինատում: *«Մերոնք եկան Քաջարան, այնուհետև ծնվեցի ես՝ այս լեռներում, որտեղ էլ մնացի մինչ օրս: Երբ Արարատի ոսկու ֆաբրիկան բացվեց, ծնողներս մեկնեցին Արարատ, նրանց հետ նաև երկու եղբայրս, իսկ ես մնացի Քաջարանում ապրող տատիկ-պապիկիս մոտ: Տարիներ հետո անցա աշխատանքի լեռնափրկարար ծառայությունում և տևական ժամանակ է՝ այս գործին եմ»,-* պատմում է ՀՀ ԱԻՆ Հատուկ լեռնափրկարար ծառայության Քաջարանի ջոկատի լեռնափրկարար, 4-րդ ջոկի հրամանատար Ասատուր Ստեփանյանը: 1998-ից է աշխատանքի անցել ջոկատում, դարձել 15 հոգանոց խմբի անդամներից մեկը, որոշ ժամանակ անց փորձել է այլ ոլորտում հաստատվել, սակայն վերադարձել է և կրկին համալրել ջոկատի շարքերը:

«Աշխատում ենք 4 հերթափոխով: Բաց հանքի վթարների և այլ դեպքերին ենք արձագանքում, հարկ եղած դեպքում տուժածներին առաջին բուժօգնություն ցուցաբերում: Բացի դրանից, ամենօրյա պրոֆիլակտիկ աշխատանքներ ենք իրականացնում, որոշում օդում փոշու առկայությունն ու քանակը, նմուշներ վերցնում: Տարբեր կանչեր ենք ստանում՝ ցավոք նաև մահացու ելքով դեպքեր էլ են գրանցվում»,- տեղեկացնում է Ասատուրը և ընդգծում լեռնափրկարարների գործի կարևորությունը մարդկանց փրկության ու արտակարգ դեպքերի կանխարգելման հարցում: Ուրախությամբ է նշում, որ վերջին 4-5 տարիներին մահվան ելքով դժբախտ դեպքեր չեն գրանցվել:

Քաջարանի ջոկատը տեխնիկայի թարմացման, ժամանակակից սարքավորումների կարիք ունի: Այժմ լեռնափրկարարներն աշխատում են խորհրդային տարիներից մնացած հին սարքավորումներով: Հնուց մնացած ժառանգությունից է նաև արհեստական շնչառության ապարատը, որը թերևս այդպես էլ չի օգտագործվել, այնինչ դրան փոխարինող առավել կատարելագործված հարմարավետ տարբերակներ վաղուց կան:

Լեռնափրկարարների ջոկատը տեղակայված է երկհարկանի շենքում՝ Քաջարանի փրկարարական ջոկատի հարևանությամբ: Այն նորոգվել է 2013-ին՝ Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի միջոցներով: Ջոկատի կազմը հիմնականում բաղկացած է հին ու փորձառու կադրերից, նոր կադրերը համեմատաբար քիչ են: Բացի ամենօրյա պրոֆիլակտիկ աշխատանքներից, կանչերին արձագանքելուց, ջոկատի տղաների առօրյայի մի մասն են կազմում նաև վարժանքները: *«Ֆիզիկական պատրաստվածությունը, մասնագիտական փորձը մեր գործում կարևոր են: Դրանց շնորհիվ է, որ կարողանում ես դեպքի վայրում արդյունավետ գործել: Բարեբախտաբար, այս տարիների ընթացքում դեպքերի արձագանքելիս վնասվածքներ չեմ ստացել: Իսկ տարիներն այնքան արագ են անցել, երբևէ չեմ պատկերացրել, որ մոտ 20 տարի կաշխատեմ այս ոլորտում: Եկա ու մնացի...»,-* անկեղծանում է լեռնափրկարարը, որի համար աշխատանքը կյանք է, ջոկատն էլ իր երկրորդ տունը: *«Կամ էլ առաջին տունն է»,-* կատակում է Ասատուրը, որը դեռևս իր ընտանիքը չի կազմել, մտադրություն ու ցանկություն միշտ ունի: Համոզված է՝ լեռներն իր նվիրած տարիները «կփոխհատուցեն» երջանկությամբ: ■

Մերի ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Քաջարան-Երևան

ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐ

Անիում արգելվում է կիրակնօրյա շուկան. զգուշացում երկրաշարժից

Շարունակում ենք «911. Արտակարգ թերթի» հավատարիմ ընթերցողներին ներկայացնել մեր ընթացիկ հետազոտությունների արդյունքները, որոնք ուշագրավ փաստեր են ի հայտ բերում անցյալի հայտնի և անհայտ երկրաշարժերի վերաբերյալ՝ էապես լրացնելով մեր գիտելիքները Հայաստանի պատմական երկրաշարժագիտության ոլորտում:

Ստորև ներկայացնում ենք մի հետաքրքիր դրվագ այդ շարքից, որը պատահել է Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիում՝ 12-րդ դարի առաջին կեսին:

Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի միջնաբերդի և Սմբատաշեն պարիսպների միջև է գտնվում քաղաքի երբեմնի ամենագեղեցիկ կառույցներից մեկը՝ Սուրբ Առաքելոց եկեղեցին իր համալիրով: Եկեղեցական համալիրում չափագրություններ, պեղումներ, ամրակայման աշխատանքներ և մասնակի վերականգնումներ են արվել Անիի հնագիտական արշավախմբի կողմից 1906-1912 թթ. (ղեկավար՝ պրոֆ. Նիկողայոս Մառ) հայ մեծահարուստների դրամական միջոցներով:

Եկեղեցին թվագրվում է 10-րդ դարի վերջ - 11-րդ դարի սկզբով: Ս. Առաքելոցը հնգագմբեթ, խաչաձև հորինվածքով եկեղեցի է, որի հյուսիսային և հարավային պատերին 12-13 դարերում կցվել են գավիթներ, իսկ հարավային գավթի հարավային պատին՝ միանավ փոքրիկ մատուռ: Եկեղեցական համալիրի պատերին պահպանվել են ավելի քան 40 հայատառ արձանագրություններ, որոնք մեծամասամբ ունեն իրավական և օրենսդրական նշանակություն:



Անիի Սուրբ Առաքելոց եկեղեցու վերակազմությունը՝ ըստ ճարտարապետ Ն. Տոկարսկու

Ուշագրավ է եկեղեցու հյուսիսային պատին կից 12-րդ դարում կառուցված գավթի արտաքին՝ արևելյան պատի հյուսիսային մասում գտնվող հյուսիսային խորշի երկու կողմերում փորագրված արձանագրությունը, որտեղ ասվում է, որ շնորհիվ Աստծո, Տեր Սարգսի և Անիի մելիք Փախրադինի առաջնորդությամբ՝ տեղերեցի Մխիթար եպիսկոպոսը, վախենալով երկրաշարժի ավերածություններից (հավանաբար՝ հնարավոր հետևանքները կանխելու համար), արգելում է փողոցում կիրակնօրյա վաճառահանությունը: Վերջում արձանագրված է անեծքի կարճ բանաձև, ըստ որի՝ այդ գիրը ջնջողի վրա կընկնեն քաղաքի մեծ ու փոքր մեղքերը:

Հայտնի է, որ Սուրբ Առաքելոց եկեղեցական համալիրը հավաքատեղի է եղել քաղաքի հոգևոր և հասարակական գործիչների համար, ովքեր հրապարակայնացրել են տարբեր օրենքներ ու կանոններ, կարևորները փորագրել վանական պատերին:

Վաճառաշատ Անի մայրաքաղաքում կային ինչպես քաղաքային, այնպես էլ մասնագիտացված և կիրակնօրյա շուկաներ, կազմակերպվում էին նաև սեզոնային տոնավաճառներ: Հատուկ առանձնացված շուկաներում և հրապարակներում կազմակերպվող տոնավաճառներից բացի քաղաքում զարգացած էր նաև փողոցային առևտուրը:

Սուրբ Առաքելոց եկեղեցու հյուսիսային գավթի ընդհանուր տեսքն այսօր



Առաքելոց եկեղեցու շուրջ կիրակնօրյա վաճառահանության արգելքի մասին վիմագիրը

Խիտ կառուցապատված նեղ փողոցներով Անիում, հավանաբար, պահպանված չէին սեյսմիկ անվտանգության նորմերը:

Թերևս, այդ էր պատճառը, որ քաղաքային իշխանությունը հատուկ հրամանով արգելում է քաղաքի այդ հատվածում փողոցային առևտուրը և տեսանելի վայրում այդ մասին արձանագրություն փակցնում: Կարծում ենք, որ այս իրադարձությունները կապ ունեն ձեռագիր մի հիշատակարանից հայտնի՝ 1131 թ. Անիում տեղի ունեցած ուժեղ երկրաշարժի, հաճախակի կրկնված նախացնցումների կամ հետցնցումների հետ, որոնք նյութական, գուցե նաև մարդկային կորուստների պատճառ են դարձել: ■

Ավետիս ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՀ ԱԻՆ ՍՊԱՐՄԾ ԲՏԱԿ
առաջին կարգի մասնագետ

911 Արտակարգ թերթ
N 34 (682)
15-21 սեպտեմբերի, 2017

Կյանքն ինչպես որ է

20 տարի հետո դուք ավելի շատ կզղջաք այն բաների համար, որոնք այդպես էլ չարեցիք, այլ ոչ թե նրանց համար, որոնք արել եք: Շարժվեք տեղից, թույլ տվեք, որ քամին ուռեցնի ձեր առագաստը, և ճանապարհի ընկեք: Գործեք: Ստեղծեք: Բացահայտեք:

ՈՒՌԵԿԻՈՒՄ ՓՐԿԵԼ Է ՎՐԱՑԻ ՏՂԱՅԻՆ

Այնինչ մտածում էր, թե ուշացել է, չի հասցնի փրկել

«Լոռէ» փրկարարական կամավորական ջոկատի փրկարար-հրահանգիչ, Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի աշխատակից Աշոտ Կարապետյանը օրերս Վրաստանի Ուռեկի հանգստավայրում ընտանիքի հետ արձակուրդն անցկացնելիս փրկել է ծովում խեղդվող վրացի 12-ամյա տղայի կյանքը: Գիորգին իր մոր և բարեկամուհու հետ էր հանգիստն անցկացնում լողափին: Մեծերը նույնիսկ չէին նկատել, որ տղան խեղդվում է ծովում և օգնության կարիք ունի:

9-օրյա հանգստի չորրորդ օրն էր, Աշոտը սովորականի պես լողում էր ծովում, ափից 30-35 մ հեռավորության վրա էր, երբ հանկարծ լսեց խեղդվող երեխայի ձայնը: *«Արագ լողացի դեպի 3-4 մ այն կողմ գտնվող տղան: Նա արդեն կապտած էր, գրեթե անշնչացած, ջրի հատակն էր իջնում: Փորի վրա պառկած, դեպի ափ լողալով, դուրս բերեցի, ճանապարհին խոսում էի հետը, բայց չէր արձագանքում, թուլացած, ուշագնաց էր: Ձենց զգացի ոտքերս գետնին են դիպչում՝ արագ առաջին օգնություն ցուցաբերեցի, համապատասխան գործողությունների շնորհիվ հաջողվեց դուրս հանել կուլ գնացած ջուրը: Կամաց-կամաց ուշքի եկավ, սկսեց արձագանքել: Ափին գտնվող մայրը շոկի մեջ էր, միայն большое спасибо էր ասում, չէր հասկանում ինչ էր կատարվում»,-* պատմում է «Լոռէ»-ի փորձառու փրկարարը, որը վերջերս է վերադարձել Ուռեկից և տեղեկացել, որ իր հերոսական արարքի լուրն արդեն հասել է նաև Հայաստան: Դեպքի մանրամասները դեռ թարմ են նրա հիշողության մեջ: Ասում է՝ այդ օրը ծովափնյա նշված հատվածում վրացի փրկարարների չի նկատել, միայն դեպքի հաջորդ օրն արդեն լողափին հսկողությունն ուժեղացվեց: *«Տղայի խեղդվելու հատվածում ջրի բարձրությունը մոտ 2 մ էր: 15 օր առաջ փոթորիկ էր եղել, ավազը տարբեր հատվածներում խորություններ էր առաջացել, տեղ կար, որ առաջ ոտքդ գետնին դիպչում էր, բայց փոթորկից հետո արդեն հնարավոր չէր դիպչել ծովի հատակին: Երևի Գիորգիի մայրն էլ հանգիստ էր, որ տղան խոր հատվածում չի լողում: Երբ տղային խեղդվելուց փրկեցի, ափ հասցրեցի, այնտեղ տարբեր ազգերի ներկայացուցիչներ կային, բացի սրտացավ հայերից, ոչ ոք չմոտեցավ ու օգնություն չառաջարկեց, անտարբեր նայում էին հեռվից»:*

Փրկարարը ջոկատի հիմնումից ի վեր բազմաթիվ դեպքերի է արձագանքել, բազում կյանքեր փրկել, բայց սա առաջին դեպքն էր, երբ հանգստի ժամանակ է օգնության հասել և միայնակ գործել: Անկեղծանում է՝ կանչերի դեպքում արձագանքելն այլ բան է, իսկ անսպասելի իրավիճակին բախվելն ու վայրկենապես գործի անցնելը՝ այլ: Ասում է. *«Վախ կար մեջս, մտածում էի, թե ուշացել եմ, չեմ հասցնի փրկել...»*:

Աշոտ Կարապետյանն իր կնոջ՝ Աննա Չիլինգարյանի և դստեր՝ մեկուկես տարեկան Ասյայի հետ բարեկամացել են Գիորգիի և նրա մոր հետ, տղայի հետ լուսանկարվել, որը որպես խոսուն վկա դեռ երկար թարմ կպահի օրվա հիշողությունը:

Նման իրավիճակներից խուսափելու համար փրկարարը զգոնության կոչ է անում բոլոր ծնողներին և խորհուրդ տալիս երեխաներին թույլատրել լողալ միայն ափամերձ հատվածներում:

Նրա խոսքով՝ առաջին դեպքը չէ, երբ իրենք օգնության ձեռք են մեկնում վրացիներին: Հիշում է, թե ինչպես 1991-ին «Լոռէ» ջոկատը օգնության հասավ Սաչխերեյի աղետալի երկրաշարժից տուժած բնակիչներին: Հայաստանից դեղորայք, սնունդ, առաջին անհրաժեշտության այլ պարագաներ են հասցրել, վիրահատությունների համար նախատեսված վրաններում լուսավորություն ապահովել:

Աշոտը կամավոր փրկարարի ուղին սկսվել է 1989-ից, երբ Սպիտակի երկրաշարժից հետո ձևավորվեց «Լոռէ»-ն:

«Փոքր ժամանակվանից սիրել եմ սարեր-ձորեր կտրել-անցնել, 7-8-րդ դասարաններում մանկապատանեկան տուրիստական բազայում կազմակերպվող բազմաթիվ արշավների, մրցումների եմ մասնակցել: Երբ ստեղծվեց ջոկատը, պատանի տուրիստներով համալրեցինք ջոկատի շարքերը:

Այն ժամանակ 17-18 տարեկան կլինեի, դպրոցը նոր էի ավարտել: Տարիների ընթացքում մասնագիտացանք, դժվարին իրավիճակներում գործելու փորձ ձեռք բերեցինք:

Փրկարարի գործն իմ կյանքի անբաժան մասն է դարձել:

Փրկարար եմ հոգով, անկախ նրանից, թե որտեղ եմ՝ ծովափին, թե լեռներում, միշտ զգոն եմ ու պատրաստ օգնության հասնելու»,- ասում է հրահանգիչը, որը 2011-ին ավարտել է Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան՝ «Պաշտպանություն արտակարգ իրավիճակներում» բաժինը՝ մանկավարժի մասնագիտացմամբ:

Փրկարարական գործունեության մոտ երեք տասնյակ տարիների ընթացքում շատ ահազանգերի հետքերով է գնացել, բայց առավել տպավորվել է 7-8 տարի առաջ Ալավերդու տարածաշրջանի ժայռերից մեկում՝ 400-500 մ բարձրության վրա մնացած տղային փրկելու դեպքը:

«Գիորգիից մի քանի տարով էր մեծ տղան, մնացել էր ժայռի բարձունքին, տեղաշարժվելու հնարավորություն չուներ, արդեն հոգնել էր, հոգեպես ընկճվել, ուզում էր ընկնել, բայց 6-7 ժամ աշխատելուց հետո կարողացանք փրկել: Բարձրախոսով խոսում էինք տղայի հետ, աջակցում, մինչև տղաները ժայռի վերևից պարաններով հասան նրան»,- պատմում է Աշոտ Կարապետյանը: ■

Մերի ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՆՈՐ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԱԿԱՆԱՁԵՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ

ԱՄՆ Կոնգրեսը հավանություն է տվել կոնգրեսական Դեյվիդ Վալադաոյի առաջարկած նախաձեռնությանը, որը կօգնի փրկել արցախցիների կյանքեր: Կոնգրեսի որոշմամբ կառավարությունը 1,5 մլն դոլար հավելյալ գումար է

հատկացնելու Արցախին՝ ականազերծման հետագա աշխատանքների համար:

Կոնգրեսականը հիշեցրել է, որ 2000-ից Արցախում գործող HALO TRUST բրիտանական բարեգործական և ամերիկյան ոչ առևտրային կազմակերպությունն արդեն իսկ ականազերծել է ականապատ տարածքների մոտ 90 տոկոսը՝ ապահովելով արցախցիների անվտանգությունը: Մինչև 2020 թիվը ականներից ամբողջությամբ մաքրելու համար պահանջվելու է 8 մլն դոլար:

Այս անգամ հատկացվող 1,5 մլնը թույլ կտա HALO TRUST-ին շարունակելու կարևորագույն աշխատանքը:

1995-ից հետո ականների պայթյունից Արցախում 370 խաղաղ բնակիչ է սպանվել, ինչն աշխարհում բարձր ցուցանիշներից է: Միայն 2004-ին զոհվել է 43 մարդ:

HALO Trust-ի աշխատակիցներն ականազերծում են իրականացնում միայն Արցախի ադմինիստրատիվ տարածքներում, որովհետև հակառակ դեպքում կարող են ֆինանսավորող հետ կապված խնդիրներ ունենալ: ■

ՀԱՅՏԱՏՈՒ՝
ՀՀ ԱԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N224-Ն որոշում
ՀՀ ԱԻ նախարարի
2016 թվականի մայիսի 6-ի
N487-Ն հրամանի հավելված N 1**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ (ՆՇԱՆԱԿՄԱՆ) ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից տրվում է հայտարարություն «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) տնօրենի թափուր պաշտոնում անձի ընտրության (նշանակման) համար:

Մրցույթը կանցկացվի 2017 թվականի նոյեմբերի 17-ին, ժամը 10:00-ին, ք. Երևան, Դավիթաշեն, 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8, 2-րդ մասնաշենք, 2-րդ հարկում, Նախարարության խորհրդակցության սենյակում:

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն Կազմակերպության տնօրենի պաշտոնին կարող է նշանակվել այն գործունակ չափահաս Հայաստանի Հանրապետության քաղաքացին, որը տիրապետում է գրական հայերենին, ունի բարձրագույն կրթություն, առնվազն մեկ օտար լեզվի իմացություն, ձեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված աշխատանքային և մասնագիտական հմտություններ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Գնումների մասին», «Հարկերի մասին», «Բյուջետային համակարգի մասին», «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդները մինչև 2017 թվականի սեպտեմբերի 29-ը Նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում (անհրաժեշտ է նշել է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N224-Ն որոշման հավելված N 1-ի 8-րդ կետում նշված պայմանները),
2) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
3) քաղվածք աշխատանքային գրքույկից,
4) ինքնակենսագրություն,
5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները,
6) կադրերի հաշվառման թերթիկ (լրացված),
7) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),
9) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել),

Քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:

Լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև մրցույթի այլ մանրամասներին տեղեկանալու համար ցանկացողները կարող են դիմել Նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչություն կամ զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ +374 12 317865:

**Հասցե՝ ք. Երևան, Դավիթաշեն, 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8
Հեռ..՝ +374 12 317865
Վեբ կայք՝ http://www.mes.am**

911 Արտակարգ թերթ
N 34 (682)
15-21 սեպտեմբերի, 2017

Մտածեք այս մասին

Արժեք ունեն միայն այն մտքերը, որոնցով մենք ապրում ենք:

ՀԵՐՄԱՆ ՀԵՍՍԵ

Օգնում են փրկարարները

Գումարը՝ խաղատան տանիքին

Անցած յոթ օրում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ստորաբաժանումները արտակարգ իրավիճակների վերաբերյալ մոտ 600 ահազանգի են արձագանքել: Շատ դեպքերում փրկարարները դեպքի վայր մեկնելուն զուգահեռ տեղեկությունը փոխանցել են այլ ծառայության. շտապօգնություն, «Վեոլիա Ջուր», էլցանց, գազի վթարային ծառայություն, կանաչապատման, սանմաքրման ծառայություն, ոստիկանություն և այլն:

Գրանցվել է ավելի քան 200 հրդեհ. այրվել են տան գույք, շինությունների փայտյա կառուցատարրեր, շինանյութ, անասնակեր, բուսածածկ տարածքներ, ջերմահարվել են պտղատու և դեկորատիվ ծառեր: Հրդեհների մեծ մասը բուսածածկ տարածքներում է գրանցվել. Արագածոտն. Տեղեր գյուղում՝ 10 հա, Արարատ. Լանջանիստ գյուղում՝ 18 հա, Լուսաշող գյուղում՝ 13 հա, Գեղարքունիք. Դդմաշեն-Ծաղկունք՝ ավտոճանապարհի մատույցներում՝ 30 հա, Վերին Գետաշեն-Մադինա ավտոճանապարհի մատույցներում՝ 10 հա, Լոռի. Ծաղկաբեր գյուղում՝ 50 հա, Վարդաբլուր գյուղում՝ 20 հա, Կոտայք. Զրաբեր գյուղույմ՝ 49 հա, Մեղրաձոր գյուղում՝ 80 հա, Շիրակ. Ջաջուռ գյուղում՝ 50 հա, Սյունիք. Նորավան գյուղում՝ 10 հա, Տավուշ. Բարեկամավան գյուղում՝ 5 հա և այլն: Շիրակի մարզի Ջորաշեն գյուղի մոտակա սարի վրա խոտածածկ տարածքի հրդեհը մեծ մակերես է ունեցել, և հրդեհաշիջմանը մասնակցել է ավելի քան 100 փրկարար, Հայաստանի զինված ուժերի 36 զինծառայող, 4 ոստիկան, անտառտնտեսության 5 աշխատակից, հարակից գյուղերի 26 բնակիչ:

Փակ դուռ բացելու վերաբերյալ էլ 130 կանչ է ստացվել: Վատառողջ, ծանրաքաշ, սակավաշարժ քաղաքացուն բնակարանից իջեցնելու կամ բնակարանում տեղից տեղ տեղափոխելու կանչեր են սպասարկել Երևանի Ավան, Դավթաշեն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Շենգավիթ վարչական շրջանների և Կոտայքի ու Լոռու փրկարարները: Տարբեր վայրերում արգելափակված (դիտահոր, վերելակի հորան, նկուղ, շենքի օդատար-ծխատար, մեքենայի շարժիչի տակ և այլն) մի շարք կենդանիներ են ազատվել: 15 օձ է հայտնաբերվել և տեղափոխվել անվտանգ տարածք: Գետերի և ջրամբարների ափերին արգելափակված մեքենաներն են դուրս բերվել երթևեկելի հատված:

Այլ կանչեր. Նոր Նորքի փրկարարները կեսգիշերին մոտ ահազանգ են ստացել, թե Բակունցի փողոցի տներիից մեկի բնակչի մատին մատանի է մնացել: Փրկարարները 33-ամյա աղջկա մատից հանել են մատանին: Արաբկիրի փրկարարները ահազանգ են ստացել, թե Հովսեփ Էմին փողոցի պոլիկլինիկայի շենքի բակում տեղադրված սյան վրայի ՀՀ պետական դրոշը փոխելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Հրշեջ-փրկարարները փոխել են դրոշը: Նույն վարչական շրջանում ահազանգ է ստացվել, թե Հրաչյա Քոչար փողոցի շենքերից մեկի բնակիչներից մեկի գումարն ընկել է շենքի ներքևի հարկում գտնվող խաղասրահի տանիքին, գումարը վերցնելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Հրշեջ-փրկարարները վերցրել են գումարը և փոխանցել տիրոջը: Գեղարքունիքի փրկարարներն ահազանգ են ստացել, թե Գավառ քաղաքի մատույցներում Սուրբ Խաչ կոչվող սարալանջին քաղաքացու ինքնազգացողությունը վատացել է, ճանապարհի դժվարանցանելիության պատճառով շտապօգնության աշխատակիցները չեն կարողանում մոտենալ տուժածին. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Հրշեջ-փրկարարներն ամենագնացով սարալանջ են բարձրացրել շտապօգնության աշխատակիցներին, ովքեր 83-ամյա կնոջը տեղում ցուցաբերել են առաջին բուժօգնություն: Նույն մարզում փրկարարները Նորատուս գյուղում ջրավազանից հանել և տիրոջն են վերադարձրել ձին: ■

Թռչկանի ջրվեժում

Սպիտակի հրշեջ-փրկարարական ջոկատի տղաները՝ հրամանատար, փ/ծ փոխգնդապետ Սերոբ Գաբրիելյանի նախաձեռնությամբ, ջոկատի միջոցներով ու ջանքերով Թռչկան հանգստի գոտում զրուցարան, խաղահրապարակ են կառուցել ու հուշաքար տեղադրել՝ «911. Սպիտակի փրկարարների կողմից՝ փրկարարի օրվա առթիվ» փորագրությամբ: *«Հուշաքարը հիշեցնելու է «911» ծառայության հեռախոսահամարը: Թռչկանում տեղադրել ենք նաև կարուսել, տաղավար՝ խորոված պատրաստելու մանղալով, որ մարդիկ լիարժեք վայելեն իրենց հանգիստը և համոզվեն, որ փրկարարները հոգում են բնակիչների բարեկեցության մասին»*,- պարզաբանում է հրամանատար-փոխգնդապետը:

Հիշեցնենք, սա առաջին հուշաքարը չէ, որ տեղադրել են փրկարարները: Նրանց ջանքերով 2012-ին Սպիտակում կանգնեցվեց ճապոնական Ֆուկուշիմայի ցունամիի զոհերի հիշատակը խորհրդանշող հուշաքար: Ամեն տարի հիշատակի այդ օրը ճապոնիայի դեսպանատնից, նաև անձամբ դեսպանը, այցելում են հուշաքարին՝ իրենց խոնարհումը բերելով անմեղ զոհերին և երախտագիտություն հայտնում Սպիտակի փրկարարներին: Հուշաքար է տեղադրվել նաև քաղաքի հրշեջ մասում՝ ի հիշատակ 1988-ի երկրաշարժից զոհված հրշեջների:

Ֆելիքս ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Իմացի՛ր և օգնի՛ր

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Բարձր ջերմաստիճաններ. ջերմային ցնցումներ

Ջերմային ցնցումները կմախքային մկանների ցավոտ կծկումներն են, որոնք սովորաբար առաջանում են շոգ պայմաններում ֆիզիկական աշխատանք կատարելիս: Ջերմային ցնցումներ ավելի հաճախ հանդիպում են մարզիկների մոտ: Ավելի հաճախ ջերմային ցնցման են ենթարկվում ոտքերի, որովայնի, ձեռքերի մկանները: Տաք կամ նույնիսկ նորմալ ջերմաստիճանի պայմաններում ֆիզիկական մեծ ծանրաբեռնվածության դեպքում մկանային աշխատանքը բերում է մեծ քանակով ջերմության արտադրման, որի հետևանքով ուժեղանում է քրտնարտադրությունը: Տուժածի մարմնի ջերմաստիճանը չի փոխվում: Ժամանակին ցուցաբերված առաջին օգնության դեպքում ջերմային ցնցումները լուրջ խնդիր չեն ներկայացնում:

Ջերմային ցնցման դեպքում խորհուրդ տվեք տուժածին դադարեցնել ֆիզիկական աշխատանքը, նույնիսկ եթե ցնցումները դադարել են: Զգուշորեն ձգեք և նուրբ մերսեք ցնցվող մկանը: Տեղափոխեք տուժածին հով, ստվերոտ վայր: Տուժածին տվեք հանքային ջրեր, սառը հյութեր: ■



ՀՀ ԱԻՆ փ/ծ տնօրեն Մուշեղ Ղազարյանը մեզ հետ զրույցում հայտնեց Բյուրականի հրդեհի պատճառը: Փրկարարներն ամտառում այրված օդապարիկ էին գտել, նաև տեսել էին անծանոթ մարդկանց, որոնք փորձել էին հրդեհել նոր անտառահատվածներ: Հետապնդել էին, բայց չէին կարողացել հասնել: Այդ մասին փրկարար ծառայության տնօրենը հայտնել է իրավապահներին: Նրանք փնտրում են հրձիգներին:

911 ԱԻՆ Արտակարգ թերթ
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Շաբաթաթերթ

Հրատարակիչ՝ **ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ**

Գրանցման վկայական՝ 03Ա061283, 24.08.2005

Գլխավոր խմբագիր՝ **Գագիկ ԵՂՅԱՆ**

Համարի պատասխանատու՝ **ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Նյութերը չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում:
Մեջբերումներ անելիս հղումը թերթին պարտադիր է:
Տպագրված է ԱՁ «Արման Ամանգուլյան» տպագրատանը.
Երևան, Հրաչյա Ներսիսյան, 1, 125
Ծավալը՝ 2 պայմ. տպ. մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 14.09.2017:
Տպաքանակ՝ 3377: Պատվեր՝ 34
Հասցե՝ Երևան, Աճառյան 1
էլ փոստ՝ artakarg.tert@gmail.com, info@911tert.am
Կայք՝ www.mes.am, www.911tert.am
Հեռ.՝ 060 691 000 (501, 502)
Գինը՝ 140 դրամ:

©

Գլխագիրը՝ **Արտակ Բաղդասարյանի**

Գլխագրի և վերնագրային տառատեսակները՝ **Մկրտիչ Մաթևոսյանի**